

Բայց եթէ մենք փափագում ենք երջանկութեան, եթէ մենք մեր ամբողջ կեանքի ընթացքում շարունակ բռնուած ենք երջանկութեան հասնելու բռն ցանկութեամբ, և այնուամենայնիւ դեռ չստանանք ենք մենք նրանից, այդ դէպքում մեր բանականութիւնը ընկնում է անհասկանալի հակասութեան մէջ, որի հետ նա չէ հաշուում Պէտք է վերջապէս երջանկութեան հասնեն նորա, որոնք, արդարեւ, արժանի են այդ բարձրութեան վերջապէս մի օր բարեգործութիւնը ոչտք է միանայ երջանկութեան հետ և կազմէ բարձրագոյն երջանկութիւն (այսինքն՝ մարդոց իրանց գործերի համեմատ). այդ անհրաժեշտօրէն պահանջում է մեր բանականութիւնը, չի կարող չպահանջել:

Բայց բանը նրանումն է, որ այս աշխարհում լինել կարողանում այնպիսի բացարձակ բարեգործութիւններ անել, որ արժանի լինին երջանկութեան, և այդ պատճառով էլ չենք կարողանում հասնել բարձրագոյն երջանկութեան Մեր նկատման աշխարհում անկարելի է հասնել իդէալական բարոյական բարձրութեան. արդէսզի մեր կամքը բոլորովին գտնենք կոդմակի խառնուրդներէ, որոշեալի լիովին համաձայնեցնենք այն բարոյական օրինաց հրամաններին, ոչտք է մեր կեանքը շարունակուի նաև երկրային կեանքի սահմաններից դուրս, այլապէս՝ բարոյական կատարելութեան հասնելու համար մեր թափած ջանքերը ապարդիւն կանցնեն Այդ իսկ պատճառով՝ բանականութիւնը ամենայն իրաւամբ պահանջում է նաեւ երկրային կեանք, ոգու անմահութիւն: Բայց դեռ այս բոլորը չէ: Եթէ մենք այնտեղ, հանդերձեալ կեանքում, հասնենք վերջապէս ցանկալի բարոյական սրբութեան և լիակատար բարեբաններ լինինք՝ արժանի երջանկութեան, այդ դեռ ևս չի նշանակում, որ մենք հասնենք երջանկութեան և կարող ենք ճաշակել այն: Զէ՛ որ երջանկութիւնը և բարեբարութիւնը բոլորովին տարբեր բաներ են Այստեղ, մեր կեանքի մէջ, համոզում ենք իւրաքանչիւր քայլափոխում, որ՝ թէ՛ բարեգործութիւնը և թէ՛ երջանկութիւնը ուրոյն—ուրոյն բաներ են, իրարից առանձնացած: Անհրաժեշտ, ներքին, անբախտելի կառ չկայ այս երկուսի մէջ, և այդ պատճառաւ չի կարելի բոլորովին հաւատարի լինել, որ իրարուց աջարան տարբեր բաները կարող են մի ժամանակ ի մի ձուլուել: Կարող են ձուլուել միայն այն դէպքում, երբ մի գերբնական ոյժ ձուլէ անոնց: Եթէ բանականութիւնը անհրաժեշտօրէն պահանջում է բարեգործութեան միացումը երջանկութեան հետ, այն ժամանակ անհրաժեշտօրէն պահանջում է նաև գեղագոյն սյմի գոյութիւնը, որը միայն կարող է ի մի ձուլել այդ երկուսը: Այդ ոյժը չէ կարող լինել կոյր, մեքենական. նա ոչտք է լինի բանական, այսինքն՝ Աստուածային Այդպիսով լինել—բանականութիւնը պահանջում է բարձրագոյն երջանկութիւն, ոգու անմահութիւն, Աստուծոյ գոյութիւն, նա չէ կարող չպահանջել այդ, այլ կերպով անհաշտ հակասութեան մէջ կրնան լինել իրեն հետ:

Կեանքի այս տեսակ յարաբերութիւնը ծանրաւիշել խնդիրների նկատմամբ՝ Կենտրոն հարաւոր է համարում. իսկ այլ կերպ՝ բարոյականութիւնը իր իսկական նշանակութիւնը և արժէքը կարցրած: Եթէ օրինակ՝ բանականութիւնը ոչ միայն պահանջէր, այլ և ընդունակ լինէր ապացուցեցնելու հանդերձեալ կեանքի և Աստուծութեան գոյութիւնը. այսինքն՝ եթէ մենք ունենայինք բանական հաւատի փոխարէն շօշափելի սպասոյց, —այն ժամանակ բարոյականութիւնը աւելորդ բան կհամարուէր: Երեւակայեք մի բոլոր, որ Աստուած և յաւիտենականութիւնը յանկարծ մեր աչքի առջև կանգնէին իրանց բոլոր գոյութեամբ: Ի՞նչ կլինէր մեր դրութիւնը այդ ժամանակ: Մեր գործողութիւնները կկատարուէին կամ երկիւղից ստիպում և կամ վարձատրութիւն ստանալու յուսով, — և ոչ մի կերպ բարոյական պարագի զիտակցութեամբ զիտակ այժմ, ասում է Կանտ, բարոյական օրէնքը դրական ոչինչ չիտառանալով հանդերձ և ոչնչով էլ չսպառնալով, պահանջում է մեզինքն միմիայն անախատէր յարգանք դէպի այն:

Ահա դրա, դէպի մենք օրէնքն ունեցած անչափաւոր յարգանքի, բարոյ անչափաւոր ցանկութեան մէջն է գտնուում մեր բարոյական ազատութիւնը և մեր գործողութեանց բարոյական արժէքը:

Փարգի. Գր. Ալ.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՅՅՆԵՐ.

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՅՅ

«Вѣстникъ Европы» ամսագրի Սեպտեմբեր համարում գտնուում է Եկեղեցական գաղութական գործը Ռուսաստանում վերնադրով մի յօդուած, որը կազմուած է թեմական վերահսկողների (епархіальный наблюдатель) և գաղութական խորհուրդների ներկայացրած հաշիւների հիման վրայ. յօդուածագիրը ի նկատի է առել 38 նահանգներում գտնուող գաղութներ: «Церковный Вѣстникъ» թերթը լսօսելով այս յօդուածի մասին՝ գաղապարաւոր է նորա կողմնապահութիւնը, որով յօդուածագիրը իւր ձեռքի տակ եղած պաշտօնական աղբիւրները 2 կարգի է բաժանել—Եկեղեց. գաղութի համար նպատաւոր և աննպատաւոր յեղացներով: և վերջիններս անպայման հաւատ է ընծայել, որովհետեւ իւր նպատակին ծառայել

կարող են, իսկ առաջիններն վաւերականութիւնը կասկածի է ենթարկել՝ լոկ խօսքեր համարելով Եփեսոս և առաջ քննադատում է նա դպրոցների անտեսական գրութիւնը. երևում է, որ իւրաքանչիւր եկեղեցական—ծխական միդատան գրքերոց տարեկան ծախքն է 198—380 մ. իսկ տարեական ուսումնարաններ 54—190 մ. գրքերի և դատական այլ պիտոյքների համար առաջինների մէջ ծախսում է 12—57 մ. իսկ միւսներն մէջ 21½—18½ մ. ուսուցիչների 1/5 մասի առճիւղ 50 մ. է հասնում, 1/4-ներ 200—կց աւելի, իսկ մնացեալներն 50—200-ի մէջ տեղի է բռնում: Հասկանալի է, որ այդքան ուժեղ ուսուցիչը չի կարող ապրել, ուստի մի քանի տեղերում ուսուցչին օգնում են տեղական քահանաներն՝ իրենց եկամուտից մասն հանելով, այլ տեղերում զիւգացիք հերթով ծառ են տանում նրա համար: Ռոմիկի պաղատութիւնը պատճառ է դառնում ուսուցչի դպրոցից շուտով հեռանալուն: Հէնց որ մի որ և է, այլ աւելի մեծ ուժեղով պաշտօն է դառնում, առանց ուշադրութիւն դարձնելու: Թէ ինչպիսի պաշտօն է այդ: Նոյն հանգամանքի շնորհիւ անընդունակ ուսուցիչների թիւը բազմանում է քանի նախանկներում 940/0-ի է հասնում: Այս տեսակ թուանշաններով ահա, հեղինակի գծած պատկերը իրաւ որ շատ սղարմելի է երևում: Սակայն երբ յօգուածագիրը անցնում է միւս տեսակի աղբիւրներին, որոնք ցոյց են տալիս եկեղեցական ծխական դպրոցների չընայելով իրենց անբաւարար գրութեանը, բերած օգուածներին և ժողովրդի գնահատմանը՝ բոլորովին կտրուածանքով է վերաբերում: Պօգօլի, Պակովի և այլ նահանգների թեմական վերահսկողների տուած այն տեղեկութիւնը, թէ եկեղեցական դպրոցների աղբիւրութեան շնորհիւ կերակրեալ կուխները, երկատարողների ահագին աղմուկով և անբարոյական երգեր երգելով փողոցներում թափառելը, կոպիտ վարք ու բարքը, սնտրիպաշտութիւններն—արդէն վերջացել են, և ժողովրդի մէջ կրօնական, բարոյական գոացմունքները աւելի բարձրացել և ագնուացել՝ այս բոլորը համարում է նա լոկ փրօն խօսքեր, որ միայն պարզամիտ և զիւրահաւան ընթերցողների վրայ տպաւորութիւն թողնել կարող են: Այսպէս ահա թեթեւութեամբ հերքելով իւր միտումին չը համապատասխանող տեղեկութիւնները, յօգուածագիրը վերջն ասում է, որ եկեղեցական դպրոցների այժմեան գրութիւնը խախտ է, և պատճառը համարում է դպրոցի համար դրուած սխալ նպատակը: Եկեղեցական դպրոցներում աշխատում են աւելի կրօնական—բարոյական կրթութիւն տալ, որմատացնել աշակերտի մէջ որոշ գոացմունքներ և ունակութիւն-

ներ, իսկ խելքի կրթութիւնը, սկզբնական գիտութիւնների աւանդումն, աննշան և երկրորդական տեղ է բռնում: Այստեղ ընդհարում են ուրեմն երկու մանկավարժական հայեցակէտներ: Այն տեսութեան պաշտպանները, որին պատկանում է յօգուածագիրը, իրեն հեղինակաւոր մի վկայի յիշում են ի մէջի ալլոց հանդուցեալ Պ. Ս. Սօլովեին, որ հետեւեալ կերպով էր պաշտպանում խելքի կրթութեան նախապատուութիւնը. Թող մեզ համար այն գաղանկը պարզեն, թէ ինչ եղանակով գիտակցութեան, մտաւոր զարգացման հետ կարելի է ներդրածել և խաւար ժողովրդի հոգու վրայ, իսկ քանի որ այդ գաղանկը դեռ անշարժ է՝ պէտք է նշմարել, որ խելքի և սրան հակադրութիւնը ծուծաբի կայթակղութիւն է: Церк. Вѣстник բաւական է համարում այդ կարծիքի գէմ բերել Պօլատայի Իլարիօն եպիսկոպոսի մի խօսքը կրթութեան մասին. «Դատարարութիւնը աւելի լաւ է քան ուսուցումը, մանկան գլուխը ամբարիակ չէ, ինչ որ նրա մէջ ընկնում է՝ մի թեթեւ քամի կարող է խիտն ջրուել, իսկ սերտը խոր է և ընդարձակ, նրա մէջ ընկած բարի սերմը երկար է մնում: Սակայն յօգուածագիրը ինքն ևս ընդունում է, որ եկեղ. դպրոցները մօտիկ ապագայում աւելի ոյժ և կարեւորութիւն կտանան՝ շնորհիւ այն հանգամանքների, որ վերջերս նոյն արժանացել են բարձրագոյն ուշադրութեան, Նոյն համար պետական գանձարանից տարեկան 3½ միլիօն բուրլու նպաստ է տււացրած նրա:

— Մայրաքաղաքի С. Пет. Вѣд. և դաւառի Донская Рѣчь թերթերը նկատողութեան են առել գրքերի գործադրութեան անկանոն եղանակը Ռոստոտանում: Գրքեր կարելի է ստանալ և կարգաւ գրալածառանոցներում, Հաղային վարչութեան (Земской) գրամթերանոցներում, հասարակական և ժողովրդական գրադարաններում: Սակայն կան բազմաթիւ գրքեր, որոնք գրալածառանոցներում վաճառում են, և արգելուած է պահել հասարակական գրադարաններում, աւելի քիչ գրքեր թոյլ է տրուած պահել Հող, վարչութեան գրամթերանոցներում, վերջապէս գրքերի մի աննշան մասը միայն կարելի է պահել ձրի գրադարաններում, Այսպիսով այն ընդհանուր կանոնը, որով գրաւնչի թոյլտուութեամբ տպագրուած գրքերը պէտք է ամեն տեղ դրածադրութիւն կարողանային դանել՝ դառնում է մի տեսակ արտօնութիւն ունեւորներին համար: Որքան աղբաւ է անձնաւորութիւնը, այնքան աւելի քիչ իրաւունք ունի գրքեր կարդալու, չբաւար դիւղացին ստիպուած է բաւականանալ միայն որոշ տեսակի գրքերով: Այսպիսի մի աննշան ան-

տեղութեան նկատմամբ երկու բան է մնում անելու. կամ կրճատել նաև գրախճառանոցներին ամեն տեսակ գրքեր ծախելու իրաւունքը, կամ թէ բոլորին էլ հաւատար իրաւունք տալ գրքերը գործադրելու. բայց որովհետեւ առաջին առաջարկութիւնն ընդունելը անմտութիւն կլինէր համաձայն օրէնքներին՝ մնում է ընտրել երկրորդը: որին պէտք է հետեւել վաղ թէ ուշ: Այդ նպատակով արդէն Կիւեւի գրադիտական ընկերութիւնը մի քայլ է արել և իրաւունք է ստացել փոճառելու իւր միջերանոցներում գրաքննելի թոյլ տուած բոլոր տպագրեալ գրքերը, մինչեւ առաջ կարող էին միայն ժողովրդական լատարութեան նախարարութեան յարակից ուսումնական յանձնաժողովի կողմից հաւանութիւն դառնալ գրքերը վաճառել: Մամուլի կարծիքով այդ նոյն իրաւունքը պէտք է տալ ընդհանրապէս բոլոր գրադարաններին և ընթերցարաններին, այն ինչ որ կարող է մի անհատ աւանդին կարգաւ: 20, 30, 100 հոգի կարող են միասին կարդալ: Եթէ մի անգամ դիւրքը, թերթի յոգուածը, գրաքննելի կողմից հաւանութիւն է դրել՝ այդ նշանակում է թէ արդէն այլ ևս մի այլ քննութեան ենթարկելու կարիք չկայ:

— Թուսաց գիւղական քահանաները, եկեղեցական արարողութիւնները կատարելուց ազատ ժամերում, զբաղուում են զանազան գիւղական տեսական պարագայութիւններով: Եւրօսլավ նահանգի Թոտով քաղաքում սեպտեմբերի վերջին կազմած բանջարարանական և պարտիզպանական ցուցահանդէսի կառավարիչ յանձնաժողովի կողմից ուարկուած ծանուցադրելու միջոցով է առանձնապէս հոգեւորականների մասին: որ Եւրօսլավի նահանգում դառնում են քահանաներ և տիրացուներ, որոնք պահում են պարտէզ, բանջարանոց, ջերմանոց, և լաւ արդիւնք են ստանում:

— Սեպտեմբերի 18-ին Խրեմի Գուրգուֆ աւանում վախճանուեց սրբադաս Բօքիսը, ու Սինօքի դպրոցական խորհրդի նախագահը, որ անցեալները կարճ միջոցով Ս. Պետերբուրգի հոգևոր ճեմարանի տեսուչ եղաւ և ռուս հոգևորականութեան աչքի ընկնող ներկայացուցիչներից մէկն էր: Նորա մարմնը Ս. Պետերբուրգ տեղափոխուեցաւ և թաղուեցաւ հանդիսաւոր յուղարկաւորութեամբ:

— Թուստոտնում վերջին ժամանակներում դպրոցական բարենորոգումներէ հարցը բաւական լուրջ կերպարանք է ստացել. մասնաւոր գիւմնադիւանների վերաբերմամբ շատ դրուեցաւ. սակայն առանց ուշադրութեան չըմտացին և հոգեւոր դպրոցները: Սոցա ծրագրերն մէջ կարեւոր փոփոխութիւններ մտնելու նպատակով զանազան տեղերից ժողովին են հրա-

ւիրուել 19 հոգի դպրանոցների և ճեմարանների աշխատանք և նախկին ուսուցիչներ: Այս խնդրի առթիւ С. Петерб. Вѣдом. թերթում պ. Նիկոլսկի մի յօդուած գրելով՝ բողոքում է այն բանի դէմ, որ այդպիսի մի լուրջ և բազմակողմանի քննութեան արժանի հարցի համար ժողովին են հրաւիրում միմիայն 19 հոգի՝ մի թիւ, որ բոլոր հոգևոր դպրոցական ուսուցիչների թիւի (մօտ 2,992 հոգի) շատ շնչին տոկոսն է կազմում: մինչ այս խնդրում իւրաքանչիւր կրթութեամբ մարդու կարծիք կարեւոր կարող է լինել և օգտակար. ուստի ինքն էլ յայտնում է իւր կարծիքները: Հոգևոր դպրոցներում աւանդուած առարկաների մեթոդը յօդուածագիրը դոհացուցիչ և նպատակայարմար չի համարում. վերլուծականի (аналитический) փոխարէն առաջարկում է համագրական (синтетический) եղանակ: Իւրաքանչիւր տարուայ աւարտող 6 տարի շարունակ լսել է աստուածաբանական առարկաներ, բայց չի կարդացել ամբողջ աստուածաշունչը. կարդացել է զանազան կտորներ, դասարանում լսել է մի քանի կարեւոր կէտերի ըուցատրութիւնը. բայց այս բոլորից յետոյ աշակերտը կարող է առել թէ ինքը կարդացել է և ուսումնասիրել ամբողջ Ս. Գրքը: Դժբախտաբար դպրանոց աւարտողների մէջ, առում է յօդուածագիրը, արմատացել է այն սխալ համոզմունքը, թէ առանց կարդալու արդէն Ս. Գրքին ծանօթ են: Այս անտեղութեան առաջն առնելու համար աւելի լաւ է նախ և առաջ լաւ ծանօթանան աշակերտները Ս. Գրքի հետ, և նոր ապա իրենց սովորած ենթարկելն քննութեան, և այս դէպքում քննութիւնը կը դառնայ ոչ թէ մեր ունեցած համոզմունքների համար խորտակիչ, այլ լուսաւորող և պարզաբանող միջոց: Աստուածաբանական որ առարկան էլ վերցնելու լինէ՛ք՝ կը տեսնէք, որ իսկապէս այդ առարկան այն չէ, ինչ որ պէտք է լինի, և այդ՝ շնորհիւ դասատուութեան վատ եղանակին, օրինակ, դաւանաբանութիւնը և բարոյագիտութիւնը խօսում են մանրամասն քրիստոնէական հաւատի սկզբունքների և բարոյական ճշմարտութիւնների վրայ, հաստատում են իւրաքանչիւր դաւանական մի կէտ Ս. Գրքից և սուրբ հայրերի գրուածքներից՝ զանազան վկայութիւններ բերելով, և այդպիսով այն ինչ որ օգեւորութիւն և հոգևոր ներշնչումն պիտի յառաջ բերէր աշակերտների մէջ, դառնում է նոցա համար մի տաղտալիչ և անհետաքրքիր դիտութիւն, եթէ ուշք դարձնէք աստուածապաշտութեան և բնմնասացութեան ուսման վրայ՝ նոյն բանը կը տեսնենք: Քրիստոնէական աստուածապաշտութիւնը, որի նմանը չը կայ իւր գեղեցկութեամբ և փառա-

ւորութեամբը որը շատ խոհուն մարդոց կարծիքով ընդունակ է նոյն իսկ անհաւատներին եկեղեցու գիւղը զրաւելու իբրև ուսման նիւթ՝ դարձել է մի չոր կարգաբանութիւն։ Իսկ բնաւ սացութիւնը որ պէտք է լինէր մարդարէական ոգեւորութիւնների և հոգևոր կրօնական ջերմեանդութեան քարոզ՝ մի վերացական անկենդան օրէնքների և խորհրդածութիւնների շարք է ներկայացնում։ Այդպիսի անմխիթաբական դրութեան վերանալու միջոց համարում է յօդուածագիրը համադրական եղանակը—նախ կարդալ զգալ Ս. Գրքը։ Բայց միայն կարդալը դուրս է պատճառ դառնալ միասնականութեան մէջ ընկնելու, որից շատ հեռու չէ և հերձուածողութիւնը։ յօդուածագիրը դուրս գէմ օրինակներ է բերում—Եփրեմ Ասորի, Նեղոս Սինացի և այլն եկեղ. հայրերի, որոնք թէև եղել են միատկեր, սակայն եկեղեցական հայրերի շարքն են անցել։ Բացի այս յօդուածագիրը ոչ միայն վնասակար չի համարում միատեղականութիւնը աշակերտների համար, այլ նոյն իսկ օգտակար և անհրաժեշտ, որովհետև նոցա դպրոցական կրթութիւնը այնպէս է եղել, որ նոքա ծայրահեղ միատեղականութեան մէջ երբեք չեն ընկնի։

Յօդուածագիրն այս բոլոր նկատողութիւնների մէջ ի հարկէ կան ճշմարտութիւններ, բայց նոքա դերժ չեն և սխալներից։ օրինակ, նոյն իսկ դասաւարտութեան վերլուծական եղանակի մերժումն անտեղի է։ Ճիշտ է, կար ժամանակ, երբ մարդկային միաբն միայն զգացմունքներով էր առաջնորդում և դատողութիւնը, լեւելք երկրորդական և չնչին տեղ էին բռնում, բայց այն դարը անցաւ, այժմ բանականութեան, խելքի դար է, ոգևորութեան բռնկումները այլ ևս չունին իրենց նախկին ազդեցութիւնը և նշանակութիւնը։ Դպրոցը պէտք է իւր ժամանակի ոգու համապատասխան դատարարակէ իւր սանիկներին, ուստի չի կարող հնացած և անցած եղանակներին նախադասութիւն տալ, այդ կը լինէր անախօսելի։ Անտեղի է նաև այն առարկութիւնը, թէ ծրագրիներն մէջ փոփոխութիւն մտցնելու համար հրաւիրուած մարդկանց թիւը քիչ է։ Դորա փոխարէն մի այլ աւելի անհրաժեշտ հանգամանք անուշադիր է թողնուած՝ այն է, թէ արդեօք նորամոյժ բարեկարգութիւնները ինչ չափով իրականութիւն դառնել և գործադրուել կարող են։ Սորա համար հարկաւոր է մարդիկ, որոնք ճիշտ ըմբռնելով բարեփոխութիւնների ոգին՝ կարողանան և դործադրել։ Լուսաւորութեան նախաբանութիւնը առանձնապէս հոգ է տանում լուսագոյն ոյժեր ընարելու և առաջ քաշելու։ Իսկ դուրս համար յաջողութեան գլխաւոր պայմաններ

րից մէկը պէտք է ուսուցչի նիւթականի ապահովութեան խնդիրը համարել։ Նոյնն է հոգևոր դպրոցների համար։ Այստեղ ուսուցիչներն առաջին 5 տարում ստանում են 750-ից 900 ր. 12 դասի համար, անշուշտ այս ռոճիկը որանց 30 տարի առաջ եղած կեանքի պայմաններում դահացուցիչ էր, բայց այժմ մի նահանգական բաղադրում չի կարող այն բաւականութիւն տալ։ Ռոճիկն այդպիսի անբաւարար զրութիւնն է պատճառ բաղադրելու լուս ոյժերի դպրանոցներից շուտով հեռանալուն, որ նոցա յառաջագիւծութեանը մեծապէս վնասում է։

—Ս. Սինոգին կից եղող Ուսումնական Յանձնաժողովը, հոգևոր ճեմարանից իրեն ուղարկուած տեղեկութիւնների հիման վրայ՝ պահանջել է դպրոցները վարչութիւններից հարկաւոր միջոցներ ձեռք առնել նոցա մէջ եղած թերութիւնները լրացնելու։ Բացի այդ՝ դժգոհութիւն են յայտնում նաև Ուսումնական Յանձնաժողովի կողմից դպրանոցների քննութեան համար նշանակուած անձինք, Սակայն այդ բողոքողների տեղեկութիւնները լիակատար և բաւականացուցիչ չի կարելի համարել, որովհետև նախ հոգևոր ճեմարան մըտնել ցանկացողների թիւը շատ չնչին է համեմատած ամբողջութեան հետ (տարեկան 2—5 հոգի)։ միւս կողմից այս մի քանի հոգիներն էլ առանձնապէս պատրաստուած են և լրացնում իրենց թերի մնացած դիտութիւնները, հետևապէս ճեմարանի վարչութիւնը չի կարող իսկական գաղափար կազմել ոչ դպրանոցների դասաւորների բարեկեցութեան և ոչ աշակերտի զբոսանոցում ստացած դիտութեան չափի մասին։ Ապա առանձին քննիչների դիտողութիւններն ևս որ նոքա անում են աշակերտի մի քանի կցկաւոր պատասխանների հիման վրայ՝ բաւարար չեն գաղափար տալու ուսուցչի ընդունակութեան, պատրաստութեան, առարկայի հետաքրքրութեան և աշակերտի հատկացողութեան մասին, այն նպատակին հասնելու համար հարկաւոր է դպրանոցներում բոլոր առարկաների քննութիւններին և բոլոր դասարաններում ներկայ լինել։

Ծրագրիներն քննութեան համար կաղմուած յանձնաժողովի անդամներն այն եղբակացութեան են եկել, որ այժմուայ ծրագրիները իրենց բովանդակութեամբ անհամապատասխան են ժամանակի պահանջին և չափադանց ընդարձակ դուրս մատմը դործադրուել կարող են միայն ճեմարաններում։ Յանձնաժողովը անհրաժեշտ է համարել կրճատել ծրագրիները, թողնելով աւելի դործնականը և հիմնականը։ Այս մասին Յանձնաժողովը առանձին ղեկուցում է տուել Ս. Սինոգին, որ իրաւացի դանելով այդ նկատողութիւններն, իսկոյն մի թղթով յայտնել է դպրանոց-

ների վարչութիւններէն՝ առաջարկելով որ մանկավարժ ուսուցիչները ժողով կազմեն ու համաժամեն Ս. Սինոզի պահանջը այժմեան ծրագրիներէ հետ և իրենց գիտողութիւններն անեն։ Ար. Սինոզը աւարտել է նաև ծրագիր առաջնորդող կանոններ կազմելու համար և նշանակել է առանձին վարձատրութիւն այն ուսուցիչներ որ կը պատրաստէ Ս. Սինոզի պահանջին համաժամ դատաւարներ։ Այսպիսով ուրիշմէն դպրանոցներէ մէջ էական փոփոխութիւններ մտցնելու հիմքը դրուած է։ Յանձնաժողովը դպրանոցների նոր ծրագրիներում մտցրել է և մի այլ առարկայ՝ «Գործնական ուղեցոյց հայիւնների համար», որը մտցրած է եզել արդէն 1867 թ. սահման որոշեալ այն ժամանակ մի խումբ չհամակրողներ կային այդ առարկայի և միւս կողմից մարդիկ չգտնուեցան, որոնք լրջօրէն զբաղուէին նորանով, ուստի հետադէտէ թուլացաւ և բնկաւ։ Յանձնաժողովը կարեւոր համարելով այնուամենայնիւ այդ առարկան դպրանոցների համար՝ նորից մտցրեց ծրագրի մէջ։ Այս նոր առարկան երկու մասից է բաղկացած՝ «Հայկական առաջաճարանութիւն» և «Կանոնագրութիւն»։ առաջինը զբաղուած է հոլուի բարոյական արժանիքների և պարտականութիւնների վերաբերեալ խնդիրներով. իսկ երկրորդի մէջ բացառուած են եկեղեցականների իրաւունքներն և պարտութիւնները։ Յանձնաժողովն առաջինը իրեւ բարոյական աստուածաբանութեան աւելի մօտ մտցրել է այդ գիտութեան մէջ. իսկ երկրորդը մնացել է իրեւ առանձին անկախ գիտութիւն։

— «Орловскій Вѣстникъ»-ում տպուած է Ստախովիչի խոսած ճառը «Խոջի ազատութեան» մասին, որ մեծ ազմուկ է յառաջացրել դրական աշխարհում։ Նրա ճառի էական միտքն է անպայման խոջի ազատութիւն և հետեւորը հիմնում է իւր տեսութիւնը Փրանսիացի պատմաբան Գիզո-ի և ուրիշ հեղինակ Ախտովի հեղինակաւոր հայեացքների վրայ։ Գիզոն ասում է՝ կրօնական ազատութիւնը ազատ կերպով հաւատալու կամ չը հաւատալու իրաւունքը գեղեւ ընտանական պետութիւնների մէջ ընդունուած չէ, սակայն երևում է որ այդ միտքը սկսում է հետզհետեւ աւելի և աւելի մօտենալ իրականութեան։ Ախտովի հաստատում է, որ յաղթութիւնը կարող է ճշմարիտ բրիտանիկութեան կողմը լինել այն ժամանակ, երբ նրա պաշտպաններն իրենց համոզմուն հաւատարմի կը մնան և կը սրտապանեն այն միակ արժանաւորացի դէմքով. երբ կը համոզան խոջի ազատութեան անհրաժեշտութեան մասին և օգտուելով այդ ազատութեամբ յաղթութեան համար անհրաժեշտ ոյժը ձեռք կը բերեն։

Երեն հետեւորը աւելացնում է իւր գիտողութիւնները. խոջի ազատութեան պահանջն է մի և նոյն ժամանակ եկեղեցու ազատութեան պահանջ, և այս ազատութիւնը անհրաժեշտ է եկեղեցու յաղթութեան, կեանքի և յարատեւութեան համար։ Ռուսաստանում խոջի ազատութիւնը աւելի պակաս չափով է թոյլ տրուած քան Անգլիայում, Գերմանիայում և Ֆրանսիայում։ Խոջի ազատութեան համար հարկաւոր է ոչ միայն հաւատի, այլ և դատանութեան ազատութիւն, պետութիւնը չպէտք է խանութի եկեղեցու դործերում, և միայն եկեղեցին իրաւունք ունի հաւատի դործերում անօրէնութիւններ աւելու։ խոջի ազատութեան վրայ բռնութիւն դործ զենքը անխոջութիւն է. որտեղ չը կայ ազատութիւն, այնտեղ պակասում է անխոջութիւնը, հաւատը։ Պ. Ստախովիչը գիմեց Ժողովականներին խնդիր տալու, որպէս զի վերացուեն այն բռնական օրէնքները, որ ուղղուած են ուղղափառ հաւատաւորների դէմ. սակայն ժողովը ստանութեամբ վերաբերուեց այդ խնդրին. իսկ մամուլի մէջ դանաղան քննադատական յօդուածներ տպուած են այս առթիւ։ «Моск. Вѣд.», շատ խիստ վերաբերուելով խնդրին՝ պ. Ստախովիչին Ռօբէպպիկներէ դասն է դնում։ «Нов. Время»-ն ստանութեամբ դատելով մի կողմից ճշմարիտ է համարում պահանջն այն կէտը, որ պէտք է խոջի ազատութեան ձգտել. իսկ միւս կողմից անարդար է համարում պետութեան և եկեղեցու անջատումը։ Ռուսաց պետութիւնը հիմնուել է ուղղափառներից ընտելուած մի երկրում, և եթէ կուտուրայով աւելի բարձր պետութիւնների գեղեւ չեն հրաժարում կրօնից, ինչպէ՞ս կարող է այդպիսի մի համարձակ քայլ անել ուսուց պետութիւնը, եկեղեցուց հրաժարուել՝ այդ նոյն էթէ պետութեան միութեան ամենամեծ ոյժը խրտակել։ Խոջի ազատութեան դործը այլ կերպ է հասկանում թերթը քան պ. Ստախովիչը։— Այս ազատակի համար, ասում է թերթը, առաջին և էական դործը տիտի լինի բարձրացնել հոգնորականութիւնը թէ ներթապէս և թէ բարոյապէս։ Գորան պէտք է նպատակ պետութիւնը. հոգնորականի ոյժը իւր քարոյր և խօսքն է. նրա ազդեցութիւնը տիտի բարոյական լինի։ Անգամին հարկաւոր է մեղմացնել հերձուածողներին վերաբերեալ օրէնքները՝ այն հերձուածողների, որոնք չեն զիմում զանազան մոլեռանդ միջոցների. ներողամտութիւն է հարկաւոր աղէտ ժողովրդի համար, որը շատ անգամ սխալ արտայայտելով իւր միտքը՝ ենթարկուում է երկար տարիների տաժանակիւր աշխատանքի և բոլոր իրաւունքներից զրկուելու պատժին։ Այսպիսով Ռուսաստանի համար վերահաս պահանջ է

նոր կրօնական մի կանոնադրութիւն, սակայն այդ կանոնադրութիւնը դժուար թէ լրացնէր պիտաւորութիւնն է պահանջում, և դրանից երևում է, որ աւելի լիցուն բառերով է զբաղում, քան իրական կեանքով: Նա առում է, թէ Քրիստոսայում և Լեզիկայում աւելի մեզմ են վերաբերում գէպի օտարադաւանները քան Ռուսաստանում: Բայց մոռանում է, որ այդ նոյն Քրիստոսայում խիստ միջոցներ են ձեռք առել կրօնական միաբանութիւնների թիւը կրճատելու համար: որ Քրիստոսական բողոքական միութեանը միջոցաւ աշխատում է Աստուծոյ կաթոլիկ գերմանացիներին իւր հետ միացնել: Ամերիկայում որ իւր կրօնական ազատութեամբ ամենաներդաւմիտ պետութիւնն է, հալածանքներ է հանել մորմոններէ գէմ: Պ. Ստալովինի կարծիքով պետութիւնը չպէտք է խառնուի եկեղեցու գործերում: սակայն միթէ պետութիւնը անտարբեր կարող է լինել գէպի այն հերձուածողները, որոնք հակաբնական օրէնքներ են քարոզում՝ օր. ներքինութիւն, կամ երբ չեն ուզում ենթարկուել զինուորական և այլ պարտաւորութիւններին:

— Սրբազան Անտոնիյ մետրոպոլիտի նախաձեռնութեամբ Աղէքսանդր—Նիսիոս մայրաւանդում հաստատած այն կարգը, որ ամեն տարի աշնանը և ձմեռը սովորական աստուածապաշտութիւնից դուրս լինում են քարոզներ միացած ընդհանուր երգեցողութեան հետ՝ այս տարի ևս սկսուեցաւ հոկտեմբերի 7-ին: Աւանքիս և Լուկի եկեղեցում պէտք է երեկոյեան ժամերգութիւնը լինը որքազան մետրոպոլիտը կատարէր: սակայն չը նախատեսուած հանդամանքների պատճառով ստիպուած եղաւ յանձնել իւր յաջորդ՝ Սիլվոս եպիսկոպոսին: Վերջինս վանքի միաբաններին հետ կատարեց երեկոյեան ժամերգութիւնը, որից յետոյ Ս. Պետրերուզի հոգևոր ձեմարանի տեսուչ Սէրգէյ վարդապետը ակեց քարոզը: Առաջին քարոզի նիւթն էր՝ Նաչինի պատանու յարութիւնը: — քարոզը լսեցին մեծ հետաքրքրութեամբ, վերջը երգեցին Վրանետալ է այլ: և այլ սաղմոսներ: ներկայ էր ժողովրդի մեծ բազմութիւն՝ թէ հասարակ և թէ կրթուած դատակարգները:

— Սամարայի գաւառական անուանականութեան պարագլուխ Պոստաշկին իւր մի յայտագրի մէջ առանձին ուշադրութեան արժանի գիտողութիւններ է անում ռուսաց վանքերի նշանակութեան մասին: Նա նկատում է նախ ռուսաց հասարակական հիւանդանոցների անկարգ և անմիթար գրութիւնը, Նիթէ մեռնողների առկոսը խիստ մեծ է՝ ոչ միայն գաւառական հիւանդանոցներում, ուր հարկաւ ամեն բան պատ-

րաստ և կատարելալ լինել չի կարող, այլ նաև համարարանական հիւանդանոցներում, որոնք աւելի յարմարութիւններ ունին, քան նոյն խոտրման Եւրոպայի շատ հիւանդանոցներ՝ գորա մի գլխաւոր պատճառը նա համարում է ոտորին ծառայութիւն կատարողների անպատրաստութիւնն ու աղիտութիւնը: Բժիշկները և ֆելդշէրները միշտ չեն կարող ներկայ գտնուել հիւանդի մօտ: ուստի խտական մեծ դործը՝ խնամատարութիւնը, ծառայի վրայ է մնում: Նա պէտք է արթուն և զդատ լինի, որ հիւանդին ժամանակին դեղ տայ, աեղը վտխէ, կատարէ նորա այլ և այլ պահանջները: գորա համար հարկաւոր է զգույն սիրտ, խնամատարութեան մասին հստիացողութիւն: Այս նպատակին շատ յարմար է համարում հեղինակը կրօնաւորութիւններին, որոնք հիւանդանոցում ծառայելով իրենց վանքերին աւելի պատիւ և օգուտ կը բերեն: քան թէ թափառելով և զանազան գիւնեաներում և հատարակական ժողովարաններում կողմններ մուրաւով: Այս նկատմամբ Սամարայի նահանգական կառավարութեան միջոցաւ գիւմումներ են եղել ուր հարկն է: Ընչու շա կրօնաւորութիւնները դեռ ևս անվարժ են այդ գործին և չեն կարող ցանկալի արդիւնքը ցոյց տալ: բայց ժամանակի ընթացքում նոցա կարելի է վարժեցնել և նախապատրաստել: Պրիվիլեանսի երկրի վանքերում արդէն դանում են հիւանդանոցներ, որոնց մէջ ծառայում են նոյն վանքերի կրօնաւորութիւններ: հէնց այդ պատճառով ժողովրդի աչքում թէ վանքերը և թէ կրօնաւորութիւնները բարձր են և գնահատելի՝ որ շատ նշանակութիւն ունի նոցա աղեկցութիւնը զարմանելու համար:

— «С. Петербург. Вѣдомости» թերթում ռուս հերձուածողների մոլեռանդութեան մի հետաքրքրական նմուշը կայ մէջ բերած:— Սեպտեմբերի 16-ին Պալլովիկա դիւղում 55 հերձուածող, օգտուելով զիւղացիների ցրուած գրութիւնից (սոցա մի մասը եկեղեցումն էր, իսկ միւսը դեղի ծայրի շուկայում), յարձակում են դիւղահան—եկեղեցական դպրոցի վրայ, մի աղնթարթում քանդում դպրոցի դռները և պատահանների ապակիները ջարդելով ներս խուժում, վայրենաբար ամեն բան լուծացնում, կոտորում: այդ տեղից դիմում են գէպի եկեղեցի: Մի պառաւ կին տեսնելով այս բոլորը շտապում է զիւղացիներին յայտնելու: ճանապարհին պատահում է ոտականապետը, որին և եղելութեան մասին տեղեկութիւն է տալիս, վերջինս դնում է խուլարարների հանգէպ և խնդրում, որ կանգնեն, սակայն կատաղի ամբոխը նորան վայր է ձգում կոտորից և ծեծում: Մինչ այդ՝ պառաւ կինը հասնում է շուկայ և ամեն ինչ պատմում գիւ-

դպրոցներին՝ Սոքա մօտ 300 հոգի զինաւորւում են լիայտերով, մահալներով, քարերով և հակառակորդներին հանդէպ ելնում. սարսափելի կռիւ է սկսւում. հերձուածողները ջարդւում են և մի քանի վիրաստերներ թողնելով միանշում. մի լիցք յետոյ դալիս է դատական իշխանութիւնը և բննելով իմանում, որ կռուի խոհական պատճառը եղել են հերձուածողները:

Վրաստանի Ռուսաստանի հետ միանալու Սեպտեմբերի 25-ին լրացած հարիւրամեկի առթիւ շատ բան գրուեցաւ Պոլիսի ընտելներին փոխադարձ արարելութեանց մասին: Ի մէջ ալոյց «Московскія Вѣдомости» թերթը գրում է. «Լսում ենք որ շատերի կարծիքով Ռուսաց ազգայնական գործի զօրացմանը մեծապէս պէտք է նպաստէ կրօնների միութիւնը. ըստ մեզ այդ սխալ է. կրօնը պէտք է ծառայէ միայն Աստուծոյ գործին: Կրօնների միութիւնը պիտի լինի անկեղծ որակց յառաջացած, և ոչ թէ ձևական կերպով, և մեզ համար աւելի զնահատելի է այն վրացին, որ իւր մայրենի եկեղեցւոյ աստուածապաշտութիւն է կատարում իւր լեզուով, քան թէ այն ինտելեկենա վրացին, որ թողել է իւր մայրենի բարբառը և անաստուածութիւն է քարոզում: Ընդհանրապէս լեզուի խնդրում աստուածապաշտական գործի մէջ պէտք է շատ զգուշութեամբ խորուել:»

ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՊԱՏԻՄԱՐԻ ՅՈՒՄԻԼԻՄ Գ-ը շարունակ եռանդով աշխատում է իւր հօտի բարեխաւութեան համար, Պատրիարքական Եկեղեցիատեղիի Ալեքիան թերթում տպուած է պատրիարքի մի նամակը, որ ուզոյած է ֆանարում գտնուող բարձր յունական ազգային դպրոցի տեսուչ սրբազան Միքայէլ Կէօքուլօսին: Պատրիարքը առաջարկում է ուսուցչապետների հետ միասին պարզել հետեւեալ կէտերը. հարկաւոր չէ՝ արդեօք մայրաքաղաքի և գաւառական յունական դպրոցների ծրագիրները փոփոխութեան ենթարկել, ժամանակի ոգուն և Տաճկաստանում ապրող սլաւոնների կարիքներին համաձայնեցնելով, Պէտք չէ՝ արդեօք Կ. Պոլսում մի մանկավարժական ժողով գումարել, տարրական և միջնակարգ ուսումնարանների ծրագիրների մէջ փոփոխութիւններ անելու համար. կարկէ չէ՝ զգացում ֆանարում մի նախարարական դպրոց (нормальная школа) բանալու: Պատրիարքի ցանկութիւնն է որ այդ հարցերի պատասխանը գրաւոր կերպով իրեն ներկայացնեն ամենախաղաղ ժամանակում:

ԲՈՒՂԱՐԻԱ

Կ. Պոլսի թերթերում տեղեկութիւն կայ

որ տեղեկական պատրիարքը Բուլղարիայի էկզարխ Յովսէփի հետ տեսակցութիւն է ունեցել, և այս հանդիպումն մի տեսակ հաշտութեան նշան է համարւում երկու պառակտեալ եկեղեցիների համար. իւր թէ այլ ևս պատրիարքը կը թողնի իւր հին ձգտումն՝ ենթարկել իւր իշխանութեան բուլղարական եկեղեցին:

Պէտք է նկատել, որ տաճկական տիրապետեան ժամանակ Բուլղարիայի և Մակեդոնիայի թեմերը գտնւում էին Կ. Պոլսի պատրիարքի իշխանութեան տակ և նա էր նշանակում այս թեմերի համար եպիսկոպոսներ, մեծ մասամբ յայնեքից. սլաւոն եպիսկոպոս թեմակալի պաշտօնով հազուադէպ երևոյթ էր: Բուլղարները վաղուց արդէն ուզում էին իրենց եկեղեցին անկախ և ազգային դարձնել, սակայն յայն կղերը ամեն կերպ արգելէր էր հանդիսանում, սրովհետև իրենց նիթական շահերին վնաս էր: Երբ ռուսաց կայսերութեան յաղթական դրօշակը ծածանուեց Ազրիանուպոլսում, ռուսաց կառավարութիւնը բուլղարներին անկախ և ազգային եկեղեցի ունենալու իրաւունքը շնորհեց: Սա մի արդարացի վարմունք էր Բուլղարիայի վերաբերմամբ, սակայն անհամապատասխան օրթոդոքս եկեղեցւոյ կանոնական գրութեան Կոնստանդնուպոլսի իրաւունքի համաձայն էկզարխը կարող է միայն այն ժամանակ պաշտօնապէս ճանաչուել, երբ նրան հաստատէ պատրիարքը. իսկ Կ. Պոլսի պատրիարքը ոչ միայն չը հաստատեց էկզարխի իշխանութիւնը, այլ և հերձուածող հրատարակեց: Այդ վարմունքն ևս թէպէտ խիստ բայց կանոնական էր:

Կ. Պոլսի պատրիարքի և Բուլղարիայի էկզարխի հանդիպումն իսկապէս դեռ ամենեւին իրաւունք չէ տալիս ընդունելու, որ նոցա մէջ վերջնականապէս հաշտութիւն կլինի ճիշտ է: Նորընտէր Յովսէփ Գ. պատրիարքը առհասարակ հաշտութեան քաղաքականութեան է հետեւում. նա պատրաստակամութիւն է ցոյց տուել երկու պառակտեալ եկեղեցիների մէջ ևս յարաբերութիւն վերականգնելու, սակայն այնպիսի պայմանով, որ անիրադրօնելի է. բուլղարական եկեղեցին պիտի ճանաչէ պատրիարքի իշխանութիւնը, ուրիշ խօսքով՝ Բուլղարիոյ էկզարխութիւնը Կ. Պոլսում պիտք է վերացուի և Բուլղարիան ունենայ իւր ազգային ինքնիշխան եկեղեցին, ինչպէս միւս օրթոդոքս պետութիւնները. ուրեմն և Մակեդոնիայում եղած բուլղարական թեմերը մտնեն պատրիարքի իշխանութեան տակ: Բայց բուլղարները ոչ մի դէպքում չեն համաձայնի ձեռք քաշել Մակեդոնիոյ բուլղարական թեմերից. իսկապէս բուլղարական էկզարխը ոչ մի պատմական հիմք չունի այդ թեմերի վերայ իշխելու. նոցա առաջ սերբական

են հզել և տեղեկական պատրիարքը ստացել է իրեն ժառանգութիւն սերբիական պատրիարքից և արքեպիսկոպոսից. ուրմն եթէ պէտք է մէկը իրաւունքները վերականգնել՝ ապա այդ թեմերը պէտք է պատահանեն Սերբիային: Ստիպել ընդհարական է կղարկել և եպիսկոպոսները պնդում են որ աւելի շուտ կը փոխեն իրենց դաւանութիւնը և կը մտնեն պապի իշխանութեան տակ: քան կը համաձայնեն ահիջ պատրիարքի առաւ պայմաններին:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՅԻ

Գերմանիայի կաթոլիկները ընդհանուր ժողովի նիստերը Օսնաբրիկում դրաւել են ժողովրդի մեծ բազմութիւն՝ ստիպել առանց որեւիցէ արգիւնք ունենալու: Ժողովներում ամբողջ շարքով զբաղուած են եղել ճառարանութիւններով և դովաւարները չապելով ու Պետրոսի փոխանորդի հասցէին: Համալսական ամենախիղիչ եկեղեցու ապագայ մեծութիւնը հաշիւելով: Այստեղ խօսել են թէ աշխարհականներ թէ հոգեւորականներ թէ նշանաւոր քաղաքագէտներ և թէ աննշան սկսնակներ: Խորհրդական Գրեքերը առանձնապէս շեշտում էր այն հանգամանքը որ արուեստների դարգացումը երբէք արգելք չէ հանդիսացել եկեղեցու յաջողութիւններին: Եւ ծիծաղում է այն մարդկանց պարզամտութեան վրայ որոնք ասում են թէ մեքենաները թողարկանների մոքի արգիւնք են: յիշեցնելով վերջիններեալ որ Ամերիկայի դաւադր կաթոլիկութեան նախանախնդիր Վալմբուսն է եղել: Աթիթէ ապագութեան դիւարը, ասում է նա որ արդէ ամբողջ քաղաքակրթութեան հիմքն է կաթոլիկութեան ծաղկման ժամանակ չէ եղել: Այնուհետեւ ամբողջ քաղաքացու դք. Լիքերը որ ջատագովում էր այսպէս կոչուած «Ազգային միութիւն» (Volkverein) որ պէտք է լինի կենտրոն ըստ կաթոլիկ ընկերութիւնների. իւրաքանչիւր կաթոլիկ իրեն պարտք պէտք է համարէ մտնել այդ ընկերութեան մէջ: Այդ «Ազգային միութիւն» ը այժմ 150,000 անդամ ունի և տարուայ վերջը պիտի լինի ոչ պակաս քան 200,000: որովհետեւ ներկայ դարը կաթոլիկութեան քարեկամներին և ոչ թէ թշնամիներին գոր է: Եւ իւր ճառը վերջացրեց այսպէս՝ «Յառաջ, արդէն թշնամին նահանջում է. մենք պէտք է կաթոլիկ լինենք հինց այժմ, ապա թէ ոչ 100 տարուց յետոյ այլ ևս կաթոլիկութիւն չի լինի: Հին սովորութեան համաձայն կղերական համաժողովը այս անգամ էլ խիտ կերպով պարտաւում էր պապին՝ աշխարհական իշխանութեան համար ունեցած տը:

բազան» իրաւունքների կրճատումը: «Գերմանիայի կաթոլիկների ընդհանուր ժողովը» ասում է նորա վճռում ըողորում է 1870 թ-ից ի վեր պապական կաթոլիկ ընծայուած վիճակի դէմ մի վիճակ, որ թէ ամբողջ աշխարհի կաթոլիկների և թէ պապի համար անտանկի է: Ժողովը դովում է Լեան Գ-ի 1898 թ. ի Օգոստոսի 5-ին Բատիլայի եպիսկոպոսներին ուղղած շրջաբերականը որով պահանջում էր վերադարձնել պապին անհրաժեշտ անկախութիւնը և անսահման ազատութիւնը, որովհետեւ աշխարհով կաթոլիկ եկեղեցու անկախութիւնը և ազատութիւնն է պահպանում: ուշագրութեան արժանի էր համարում վերջին ժամանակները զորացող հակակղերական «Անջատում» Համալս. նշանաւորում շարժումը: Միւս ճառարաններն ևս շատ եռանդով ի դէմ էին հրաւիրում բոլոր ճշմարիտ քրիստոնեաներին ընդդէմ այդ շարժման: «Գորա փոխարէն հակակղերականների ժողովներում ազատամիտ հոգեւորները ցոյց տալով կղերականների հակակղերականական արգում թիւնը՝ համոզում էին երբէք ոչ մի զիջումով հաշտութիւն չանել նոցա հետ:

— Կաթոլիկ միաբանութիւնների համար Փրանսիայում հաստատուած նոր օրէնքների զործադրութեան հրամանները մեծ զայրոյթ են առաջացրել կղերականների մէջ: Ըստ «Liberté» թերթի շատ վանքերի վանահայրեր յայտնում են որ կառավարութիւնը յետին մարերունի կամենում է եպիսկոպոսներին զրգուել պապի դէմ և եկեղեցու մէջ պառակտում մղել: Թերթից երևում է որ այդ և կին կրօնաւորների մի մեծ զաղթականութիւն է սկսուել դէպի օտար երկիրներ: Բենեդիկտեանների մեծ մասը ընտրւել է իւր համար ապաստանարան Ֆրանսիայի վանքը: նոցա և ուրիշ զաղթել են նախ կարգի կրօնաւորակները որոնց մէջ կան երկու մեծ իշխանութիւններ: Գովիկանները, յիսուսեան Լասու մայրնիստ յոյրերը պիտի տեղափոխուեն Բելգիա և Լատուիա:

Հակամարտի 3-ին զիշերուայ ժամի 12-ին լրանում էր նոր սահմանած օրէնքով այն ժամանակամիջոցը, մինչև եւր Փրանսիայի սահմաններում գործել ցանկացող միաբանութիւններ խնդիր տալ և երկրի մէջ մնալու իրաւունք ստանալ կարող էին: Արդէն զի յիշեալ օրէնքը լսի մեայն մեռեալ տառ չը մնայ, այլ զործադրուի՝ արդարադատութեան նախարարութիւնը ըստ պատահան պալատների պրօկուրներին մի շրջաբերական է ուղարկում, նախազգուշացնելով օրէնքի անպայման գործադրութեան համար: — Այն միաբանութիւններ, որոնք որոշեալ ժամանակամիջոցում խնդիր չեն ներկայացրել, որպէս զինորից հաստատուելու իրաւունք ձեռք բերեն և որոնց անդամները չեն ցրուի:

նոցա սպասում է 2 տարուայ բանտարկելութիւն և 5000 ֆրանկ տուգանք: Քանի աւելի է մօտենում եւսմանայ ժամանակամիջոցի վերջը, այնքան խնդիրներ թիւը աւելանում է. վերջին օրերը օրական 25-30 խնդիր էր մանում պալատը: Հաս միտքանութիւններ, որոնք թերթերում յայտնել էին թէ իրենք խնդիր կը տան և կը հեռանան Գրանսիայէջ, այժմ խնդիր են առել իրաւունք ձեռք բերելու համար, որպէս զի Գրանսիայում մնան Այգլիտիւնների թուին պատկանում է նաև նշանաւոր «Հարաբեօղ» միաբանութիւնը, որն ունի այժմ Գրանսիայում 28 բաժանմունք և մօտ 1100 անդամ: Այս միաբանութիւնը իր հաբեօթութեամբ և վաճառականութեամբ շատ շատերից առաջ է: Միայն մաքսահարկ նա անցեալ տարի Գրանսիային տուել է 3 միլիոն ֆրանկ: «Հարաբեօղ» քնկերութեան միաբանութիւնը վաճառում է յայտնի խմիչքը, որի պատրաստելու գաղանկը միայն այդ կարգի կրօնաւորներին է յայտնի: Գլխաւոր կենտրոնն է Գրենօբլը և հէնց այդ տեղի եպիսկոպոսն էլ պաշտպան է հանդէսացել այդ միաբանութեան, որի համար դրում է «Siecle» լրագիրը: «Այդ միաբանութեան անդամները օգտակար են եղել ազգին ոչ իբրև կրօնաւորներ, այլ իբրև խմիչք պատրաստողներ և թէև այդ կրօնաւորները իրենց շէրի վրայ կայնում են խաչի նշաններ, սակայն այդ դեռևս ապացոյց չէ, որ նոցա խմիչք բարեգործական նպատակ ունենան: Նոքա լաւ արդիւնաբերողներ են և նրանց է պաշտպանում եպիսկոպոսը, բայց չէ որ արդիւնաբերութիւնը ղուտ աշխարհական գործ է. ինչ հիման վրայ ուրեմն հոգեւորականը — եպիսկոպոսը պաշտպան է հանդիսանում մի աշխարհական գործի:

Յիսուսեան կրօնաւորները վերջացին իրենց հաշիւները, բայց չկամեցան հեռանալ առանց երկրի մէջ խռովութիւն ձգելու: Նոքա յայտնում էին թերթերում, որ աւելի լաւ է հեռանալ, քան զնալ, քան ենթարկուել այգլիտի մի անտանելի օրէնքի: Պետութեան մէջ մի այլ պետութիւն հաստատելու ձգտող կրօնաւորները և պատժից ազատ լինելու արտօնութիւն վաշտաւոր միաբանները բնականաբար պիտի հրաժարուէին միւս քաղաքացիներին համահաստատ օրէնքներն ենթարկուելու պայմանից:

Մինչև երկկոյեան ժամի 8-ը, 4 ժամ պալատ որդեալ ժամանակից, 64 արական և 532 կին միաբանութիւնների կողմից խնդիրներ արուեցան: Երկուսից 458-ի մնալու համար դեռ որոշում չէ եղել:

Գրանսիայում հասարակութեան միաքը ղեաղուած էր երկար ժամանակ այն խնդրով, թէ արդեօք կաթ, միաբանութիւնները կը հե-

ռանան Գրանսիայից թէ կը հպատակուեն: Բանից երեաց, որ մեծ մասը լաւ համարեց հպատակուել օրէնքին: համարեա բոլոր կին միաբանութիւնները մնում են, իսկ արականների 80% ը, Վճռել են հեռանալ միայն հետեւեալ կարգերը. —

1) Առումագլխիսնները որոնք ունին 14 հիմնարկութիւններ, 188 հեկտար հող 5 միլիոն ֆրանկ արժողութեամբ. 2) Բենեդիկտեանները, որոնք հիմնարկութիւններ ունեն 22 զեպարտամեններում և կայք 4 միլիոն ֆրանկ արժողութեամբ. 3) Կապուցիններ — 32 հիմնարկութիւն, 74 հեկտար հող և 6 միլիոն 80 ֆրանկ զբաղակալութիւն. 4) Կարմելիտներ — 13 հիմնարկութիւն և 3 միլիոն զբաղակալութիւն, և վերջապէս 5) Յիսուսեաններ՝ 51 հիմնարկութիւն, 497 հեկտար հող և 59 միլիոն ֆրանկ զբաղակալութիւն: Գրանսիայում կը մնայ 61 արական միաբանութիւն 2,000 հիմնարկութիւններով և 532 կին միաբանութիւն 6778 հիմնարկութիւններով: Եթէ ուշք զարձնենք այն հանգամանքի վրայ, որ առաջ միայն Գրանսիայում 910 միաբանութիւն կար, այն ժամանակ հեշտ է երևակայել, թէ որքան մեծ ոյժ էին ներկայացնում նոքա Այն այր և կին միաբանութիւնները, որոնք վճռել են հեռանալ՝ ուղեւորուում են գէպի Հուեյարիա, այն տառա պատերնների և քոյրերի մեծ բազմութիւնով լցուել էր՝ այդ երկիրը, որոնք իրենց տարօրինակ համադրեաններով ժողովրդի մէջ հետաքրքրութիւն էին դարձնում: Այն կարգերը որոնք պահում են առանձին սոսումնարաններ և պանսիոններ, ուղղակի ամբողջ կազմով լիտաւորուել են այնտեղ. օր մի կարգ ժընեի ամիսն զննելով մի հոյակապ վիլլա, տեղափոխեց այնտեղ իւր պանսիոնը, որի մէջ կըթաւում են Գրանսիայի ազնուական աղջիկներ: Օրէնքի գործադրութեան ժամանակ ընդհարումներ տեղի ունեցան այն կարգերի հետ, որոնք չէին ուզում հպատակուել օրէնքին. պետութիւնը սակայն ած եղաւ ոստիկաններ նշանակել կարգ պահպանելու համար:

Գրանսիայից հեռանալով պապական օւ պահա կի մի մասը ուղեւորուել է Արևելք, քարոզչական գործին ոյժ տալու համար, թէև լատին կրօնաւորները առանց այն էլ անարգիլ գործում էին շատ տեղ ad majoram papae gloriam (պապի մեծ փառքի համար): Ռուսինիայում լատին քարոզիչներին օգնում է թէ կառավարութիւնը և թէ ին. տեղեկանքիս: «Нов. Время»-ի թղթակիցը յայտնում է, որ լատին կրօնաւորները Ռուսինիայում աւելի ու աւելի են բազմանում. 2 տարի առաջ մի ինչ որ Մորիսօ յիսուսեան կարգի կրօնաւոր քարոզում էր այնպէս համարձակ կարծես թէ Կոնգոի ամերիկում լինէր, նա այնքան յիմարացաւ

որոնք իսկ 2 գիւղացու ատրճանակով սպանեց. ուստի զորքը պապական դատաւարութեան տաժանակիր աշխատանքի սակայն վճառվելով ատենը փոխեց ժմիւր և գործը ձգեց Գալացի դատարանը. իսկ այստեղ բաւականացան մի տարի բանտարկելով իւր զորքով, Միկնոյն ժամանակ Վենգրիայի, Լեհաստանի և Գերմանիայի կրօնաւորութիւնները մտնում են Մոլդաւիայի հիւանդանոցները, կանգնում են հիւանդանոցի մօտ և նոցա նեղ բոլորի աշխատում են զօրով կաթոլիկ դարձնել նոցա. կարծես թէ 2-ինաստանում լինին: Միթէ Ռուսաստանը իրաւունք չունի խառնուելու այս գործում, պահանջելու, որ խառնութեամբ պահպանուին Բելլիկի դաշնագրութեան օրէնքները. միթէ հենց միայն սեփական ապահովութեան համար արգելք չպիտի հանդիսանայ, որ Ռուսաստանի դէմ չդարձնեն Ռումինիայի 10 միլիոն ժողովրդին, հոռնաշէնի եպիսկոպոսի առաջարկութիւնը Գեորգ մետրոպոլիտին որ պապականութիւնը ընդունէ՝ օրինակ կարող է լինել, թէ որքան են յառաջ գնացել կաթոլիկները, Վառաշարութիւնը փակել է տուել 3 հաս ուղղափառների դպրոցներ և սոցանից մէկը յանձնել մի կաթոլիկ եպիսկոպոսի, որը դարձրել է այն պապական դպրոց, Միայն վերին Մոլդաւիայում կրթում են 200 Վենգրացի կաթոլիկ սեմինարիստներ, որոնք պատրաստում են ապագայ քարոզիչներ լինելու:

— Սպանիայում և սփռուել են կոիւնքը կրօնաւորական կարգերի դէմ: 20 տարի առաջ Մադրիդում կային 30 հոգեւոր միաբանութիւններ, արանց և կոնանց միասին առած, և ընդամենը մէկ յիսուսեան ընկերութիւն, իսկ այժմ կայ 92 միաբանութիւն և 2 յիսուսեան ընկերութիւն, նոյնպիսի համեմատական վիճակ ներկայացնում են կրօնաւորական կարգերը նաև Սպանիայի միւս քաղաքներում: Եւս ահաւոր բանակը պատել է Սպանիայի ժողովրդին ամեն կողմից, ինչպէս սարդի ոտայնի թիկերով, Սպանիական կառավարութիւնն այժմ խաղաղ ձանապարհով ուղղում է պակասացնել այդ կարգերի ոյժը: Ներքին գործոց նախարարը հետաքրքրուելով դանում է մի օրէնք միաբանութիւնների վերաբերեալ, որը սակայն թէ պետութեան անհոգութեան և թէ միաբանութիւնների ընդդիմադրութեան պատճառով մնացել էր իրարէ մեկեալ տառ, Այդ օրէնքը պահանջում է, որ նոր հաստատուող միաբանութիւնները նախ քան պաշտօնական բացուելը, մէկ շարքի առաջ իրենց կանոնադրութիւններից մի օրինակ տան կառավարութեան, այլ և իւրաքանչիւր կէս տարուց յետոյ իրենց ել և մօտից հաշիւները ներկայացնեն, այժմ սկսում են այդ օրէնքով առաջնորդուել, Զարմանալի է, որ այս օրէնքը Վատիկանում ոչ մի զեղուհութեան առիթ չի տուել, այլ խնդրին նայում են պարզ կերպով, իրեն մի միջոցի վրայ, որով պետու-

թիւնը կամենում է տեղեկութիւն ունենալ իւր երկրում եղած միաբանութիւնների մասին:

«Սրբորան» թերթը յայտնում է, որ Երաւիայի Դուրաքոց շրջանում ամբողջ մի գիւղի ուղղափառ ընակիչները ընդունել են կաթոլիկ ունիան և մի ուրիշ գիւղ էլ պատրաստում է նորան նախորդին հետեւելու: Պալատին եպիսկոպոսն այս տեղերում շատ յաջողութեամբ է յառաջ տանում կաթոլիկութեան գործը. եպիսկոպոսին օգնում է թէ խօսքով և թէ գրամով Աւարո-Վենգրիայի հիւպատոսը, Թերթը վերջն աւելացնում է. «Դրանն այժմ մեծ գեր է կատարում քարոզչական գործում Բացի գրանից միայն Բալկանեան թերակղզում այժմ գտնում են 1600 ողորմած քոյրեր քարոզչական գործին նպաստելու համար»:

— Սակայն նման յաջողութիւններ չունի Վատիկանը բուն Իտալիայում, որտեղ նրան զօրեղ կերպով դիմադրում է թէ ժողովուրդը և թէ պետութիւնը: Ցարենթնում դուժարուած կաթոլիկների ժԷ. ժողովում խօսում են երկու եպիսկոպոսներ՝ Լիփօրնօ և Ռունօ: Սկզբում խօսեց Ռունօն, շատ մեղմ լեզու գործ դնելով. բայց վերջը նա կամեցաւ ցոյց տալ, որ ժողովի նպատակներից մէկն է յետ պահանջել եկեղեցու այն իրաւունքները, որ կրճատել է պետութիւնը, նա բողոքում էր հոգեւոր դպրանոցների աւարտողների զինուորական ծառայութեան ենթարկելու օրէնքի դէմ: Երբ հետեւ այդ երիտասարդները պատրաստում են սրբազան գործունէութեան համար, իսկ պետութիւնը տանում է նոցա զօրանոց, որտեղ անդադարանապատի խօսքեր են ասում բարոյականութեան և կրօնի վերաբերմամբ: Ծառը վերջացնելուց յետոյ ահագին աշմուկ և աղաղակ բարձրացաւ Իտալիայի զինուորականների և ազգասէրների կողմից. «Վատիկանը վիրաւորեց Իտալիական զբօսակը, նա վիրաւորել է հայրենիքը» — աղաղակում էին նոքա, Աշմուկը ևս առաւել մեծացաւ երբ Լիփօրնօն բացականչեց. «O Roma, o morte!» Իտալիայի մամուլը պահանջում է իսկոյն և եթ պատժել երկու եպիսկոպոսներին հայրենիքին վիրաւորանք հասցնելուն պատճառով: Ընկարգութիւնը այն աստիճան մեծացաւ, որ պետութիւնը ստիպուած եղաւ երկու քննիչ ուղարկել զօրծը հետազօտելու համար: Վատիկանը երկու եպիսկոպոսներին փոխադրել է այլ թեմեր:

— Որչափ և հակակրեւի լինին յիսուսեան կրօնաւորները բոլորի համար առհասարակ, այնուամենայնիւ նոքա այժմ մեծ ոյժ են ներկայացնում: Վերջին պաշտօնական վիճակագրութիւնից երևում է, որ նոքա թուով 13,000-են, կարգի գլխաւորն է (Генераль) Սպանացի Լուիս Մարտինը, Գլխաւորի պաշտօնը սովորաբար Իտալացիների կամ սպանացիների ձեռքն է լինում. երբէք ոչ մի ֆրանսիացի ու անգլիացի այդ պաշտօնի մէջ չեն եղել:

կարգի զլիաւորի բնակութեան վայրը համարուած է Քեղզլան. Լուիս Մարտենի մօտ կան 5 լէյտենանտներ՝ իւրաքանչիւրը մի մի եւրոպական մեծ ազգութիւնից։

— Աւստրիայից տեղեկութիւն են ապրիս կաթոլիկների երկու ժողովների մասին, որոնց հետ միաժամանակ եղել են և երկու հակակղերական ժողովներ, 2ը նայելով կղերականների մեծ քանքերին այնուամենայնիւ հակակղերականների ժողովները աւելի բազմամարդ էին. նոցանից մէկի մէջ ներկայ են եղել 50,000 մարդ, կղերականների ժողովներում խօսող ծառախօսներից աչքի է ընկնում հայր Հակէյտերը, որ առանձին ուշադրութեան արժանի էր համարում վերջին ժամանակներս զօրացող հակակղերական «Անջատումն Հռոմից» իշխանարանով շարժումը. միւս ծառախօսներն ևս շատ եռանդով ի զէն էին հրաւիրում բոլոր ծջմարիտ քրիստոնեաներին ընդդէմ այդ շարժման, հակակղերականների ժողովներում ազատամիտ հըստորները ցոյց տալով կղերականների հակազերմանական ուղղութիւնը՝ համոզում էին երբէք ոչ մի զիջումով հաշտութիւն չանել նոցա հետ։



ԵԿԵՂԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՐ ԹԻՖԼԻՉՈՒՄ

Նորին Սրբութիւնը Սեպտ. 19-ին, եր. ժամը 4-ին, երեւանի վրայով ծանապարհ ընկաւ դէպի Թիֆլիզ, ուր ժամանեց կիւրակէ Սեպտ. 23-ին երեկոյեան դէմ, Կարսի երկաթուղով։ Վեհափառ Հայրապետի հետեւողների թիւը ծանապարհին հեզգհեռէ աւելանալով՝ Թիֆլիզ մտնելիս ուղեկցում էին Տ. Տ. Անանիայ, Սահակ Այվազեան, Յուսիկ և Սարգիս եպիսկոպոսները, Տ. Կորիւն վ. և Տ. Մեսրոպ վ. իրրեւ թարգման։

Նոյն օրը, Սեպտ. 23-ին երեկոյեան, Ն. Սրբութեանը այցելութիւն եկաւ Թիֆլիզի նահանգի վրաց ապիստականութեան պարագլուխ իշխան Գ. Զ. Մելիքովը։ Հետեւեալ օրը,

Ճաշուայ ժամը 3-ին, Ն. Վեհափառութեանը այցելեց Թիֆլիզի նահանգապետի պաշտօնակատար գնաւ. Ի. Ն. Սիւնչինը, իսկ սեպտ. 25-ին Կովկասի Ռատումն. շրջանի հոգարարձու պ. Զաւադակին։

Ապա սեպտ. 26-ին, առաւօտեան ժամը 10-ին, Ն. Սրբութիւնը այցելեց Կովկասի նախկին փոխարքայ՝ Նորին Մեծութիւն Քաղաւոր Կայսեր կողմից վրաստանի Ռուսաց Պետութեան հետ միանալու հարիւրամեկի հանդէսներին ներկայացուցիչ և նախագահող կարդուած Ն. Կ. Բ. Մեծ իշխան Միխայէլ Նիկոլայեւիչ և Յունաց թագուհի Օգոստոփառ Օլգա Կոստանդինովնային։ Սեպտ. 28-ին, առաւօտեան ժ. 10-ին, Ն. Կ. Բ. Միխայէլ Նիկոլայեւիչ և Գէորգի Միխայելովիչ փոխայցելութեան եկան Ն. Սրբութեան մօտ։ Այլը տեւեց 20 րոպէ, որից յետոյ Բրձ. իշխանները դիտեցին վանքի աւագ եկեղեցու բակում թաղուած հայազգի անուանի զօրավարների՝ Լօրիս—Մելիքեանի, Արսաղեանի, Լազարեանի, Տէր Վուկասեանի, Նելկովնիկեանի, Քիշմիշեանի և այլոց զերեղմանները։ Նոյն օրը Թիֆլիզի ժողովարանում ի պատիւ Օգոստոփառ Հիւրերի տրուած էր նախաճաշ. ներկայ էին Մեծ. իշխ. Միխայէլ Նիկոլայեւիչ, Գէորգի Միխայելովիչ, Յունաց թագուհի Օլգա Կոստանդինովնայ, Կառավարչապետ իշխ. Կալիցին, Մեծ. իշխ. Գ. Երեւա վարդապետներ, Մարիա Գէորգիեւնայ, Մեծ. իշխ. Նիկոլայ Միխայելովիչ, յունական արքայորդի Անդրէյ, Կառավարչապետի օգնական զեն. Ֆրէզէ և ընդ Ն. Ս. Օծութեան Աղգիս Վեհ. Հայրապետը, իւր շքախմբով, հրաւիրուած էր այդ նախաճաշին և ներկայ զանուեցաւ ինչպէս վրաստանի և իմերէթի էկզարխ Ֆլաւիան և ուրիշ բարձրաստիճան հիւրեր ու հաստատութիւնների ներկայացուցիչներ։

Սեպտ. 29-ին, շաբաթ երեկոյեան, Ն. Սրբութեան Օծման Ը. տարեդարձի առթիւ նախատօնակ կատարուեցաւ Մոլնու ս. Գէորգ եկեղեցում, ուր և իջաւ Ն. Վեհափառութիւնը։ Հետեւեալ օրը Գեր. Անանիա եպ. հանդիսաւոր պատարագ մատոյց, որին ներկայ էր Ն. Սրբութիւնը՝ եպիսկոպոսների, վարդապետների և քահանաների դասի հետ։ Պատա-